ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի N 55-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել Ռուբիկ Համլետի Սարգսյանը, Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի N 55-Ա որոշման մեջ փոփոխություն անելու և Նաիրի համայնքի Զովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Ռուբիկ Համլետի Սարգսյանին պատկանող 07-029-0210-0016 կադաստրային ծածկագրի 0,835775 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի վրա ջերմոցային տնտեսություն և օժանդակ շինություն կառուցելու խնդրանքով: Պահպանելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների և ներառել այն ամենամյա հողային հաշվեկշռում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի N 55-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Ռուբիկ Համլետի Սարգսյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման ընդունումը համայնքի 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի ենթադրում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան